ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ

Ակադեմիկոս Գևորգ Բեգլարի Ջահուկյանի կյանքը եղել է նվիրում գիտությանը:

Նա 1962 թ. տվել էր իր համաձայնությունը, այդ մասին հայտնի է ԳԱ նախագահ Վ. Հ. Համբարձումյանի մի առիթով ասածից, ղեկավարելու Ակադեմիայի լեզվի ինստիտուտն այն պայմանով, որ ամեն օր աշխատանքի լինի ցերեկվա ժամը 13-ից մինչև 17-ը, ինչպես ինքն է ասած եղել՝ առավոտյան 3-4 ժամ զբաղված է լինելու իր աշխատանքներով (ասում են՝ նախագահը նկատել է՝ «ի՞նչ է, մենք չե՞նք աշխատում»). և այդպես էլ եղել է մինչև 2005 թ.:

Իսկ դա համալսարանի բանասիրականը երկրորդ հերթով՝ օրվա 14-ից մինչև 19-ը դասեր առածներիս, լեզվի ինստիտուտում ասպիրանտ և հետագա այլ զբաղմունք ունեցածներիս համար մի տեսակ հրաշալի էր, մեր սովորույթին բռնում էր. մենք ինստիտուտում տարիներ ի վեր աշխատեցինք օրվա ջահուկյանական ռեժիմով:

Նա խիստ ռեժիմի գիտնական էր, իր պատկերացումներում՝ անդրդվելի. սիրում էր ասել՝ «Ինձ մի՛ խանգարեք», թեկուզ աշխատանքային հարցով դիմելու լինեինք. շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին էր միայն 2-ական ժամով ընդունում աշխատակիցներիս, հատկապես 60-80-ական թվերին: Գիտական ցանկացած հարցի առնչվելիս, երբ նրա ընդունելությունն էինք ստանում, սիրում էր ասել՝ «Ես այդ մասին մտածել եմ», «Ես այդ գրել եմ». «Ամոթ չլինի հարցնել՝ իմ այս գիրքը կարդացե՞լ եք». լավագույն դեպքում՝ «Ա՛յ, տեսնո՞ւմ ես», և մի ձեռքի մատները մյուսից հանկարծ հեռանում, և ձեռքերը բացվում էին:

Ջահուկյանը լեզվաբանությունը, ավելին՝ հայագիտությունը, իր շուրջն էր առել, ամեն ինչի մեջ ինքն էր. և հիմա ենք իմանում, որ դա ամեն մի նվիրյալ գիտնականի խիզախումների նախապայման է, վկան՝ նրա գրքերն ու հոդվածները (հայերեն, ռուսերեն, օտար լեզուներով), նրանցում արտահայտված տեսությունները, մտքերը;

Նա 20-րդ դ. 60-90-ական թթ. հայ լեզվաբանության ամենամեծ դեմքն է: Այդ բնագավառի նման մեծությունը, ասենք, պիտի հիշվի ամեն անգամ, ամեն գիտական հարցի առիթով:

Հետաքրքիր շփումների անձնավորություն էր: Նրա տանը ես եղել եմ երկու անգամ (առաջինը «Լիդիերենի բառարան»-ը վերցնելու), երկրորդը մեկ օրում՝ չորս անգամ, առաջին անգամը՝ զարմացավ, քանի որ խանգարում եմ, երկրորդին՝ հանդիմանեց, որ պիտի ուշադիր լինեմ, երրորդին՝ զայրացավ, չորրորդին՝ «Ա՛յ, կլինես ղեկավար, կտեսնես՝ ինչ է նշանակում անուշադիր լինել», և ծիծաղեց իր յուրօրինակ ծիծաղով. իսկ առիթը իմ թեկնածուականի դոկումենտների էջերին (այդ և հակառակ երեսին) ստորագրելն էր, պիտի այդ օրը լիներ. ամեն անգամ մի թուղթ մնում էր չստորագրված (նա այդ օրվանից երկուսուկես ամսով գնում էր արձակուրդ):

Իմ նկատմամբ, ասեմ. միշտ բարյացակամ է եղել. իմ ամենօրյա աշխատանքը գնահատող. ինքն է ինձ իր մոտ կանչել և հորդորել նոր-նոր տպագրվող գիրքս ներկայացնել իբրև ատենախոսություն, այն ժամանակ. այդ տարիներին էլ իմ երկու ատենախոսությունը ներկայացվեց ռուսերեն, գնահատվեց միութենական ԲՈՀ-ի կողմից: Նա դրական լավագույն հատկանիշներով օժտված անձնավորություն էր, կյանքի ամեն մի դժվարություն տոկուն ձևով հաղթահարած, ժուժկալ, ըստ այդմ՝ բացառիկ ձեռքբերումների հասած: Իմաստուն էր, թվում էր՝ ամեն ինչ գիտի. ես երբեմն մտքեր ու արտահայտություններ էի հորինում կամ դրանք թարգմանում գրաբար, և թե՝ «Ո՞վ է ասել, դու ես հորինում, բայց վատը չէ, կարծես»,- ասում էր:

Լեզվի ինստիտուտը տնօրինեց տարիներ շարունակ, ունեցավ աշակերտներ, որոնք, ես վստահ եմ ասում, նրան հիշում են երախտագիտությամբ: Այդ տարիներին աշխարհում հայերենի վերաբերյալ յուրաքանչյուր հարց լուծվում կամ դրվում էր լուծման մեծ գիտնականի՝ Գ. Բ. Ջահուկյանի իմացությամբ, համաձայնությամբ:

Նրան ճանաչում էին ամենուրեք, հատկապես գիտության ոլորտներում՝ բուհ, ինստիտուտ, ակադեմիա:

Վ. Գ. Համբարձումյան